ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹՅԱՆԸ

ՍԻՐԵՑԵԱԼ ՁԱՒԱԿԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՁԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ԱՆԴԱՍՏՈՅ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Հոգեկան անխառն ուրախութեամբ տեղեկացանք Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանէն, որ Նիւ Եորքի Իրանահայ Միութիւնը արժանավայել շուքով կը նշէ իր կազմութեան 50 -ամեակը:

Մենք անձնապէս տեղեակ ենք, որ անցնող հինգ տասնամեակներու ընթացքին Իրանահայ Միութիւնը ազգային եւ մշակութային հանդիսութիւններ կազմակերպելով՝ իր օգտակար նպաստը բերած է հայապահպանման եւ հայրենասիրական նուիրական առաքելութեան:

Իրանահայ Միութիւնը, ամէն յարմարութիւններով օժտուած իր սեփական կեդրոնը ունենալէ ետք, կրկնապատկած է իր ճիգերը եւ մշակութասէր հասարակութեան ներկայացուցած է բազմաթիւ արժէքաւոր ձեռնարկներ:

Մեր մաղթանքն է որ 50-ամեակի այս խանդավառ նշումը դառնայ նոր եւ յարաճուն իրագործումներու մղիչ ոյժ, որպէսզի առաւել եւս ճոխանայ ու ծաղկի համայնքի մշակութային և ազգային հասարակական կեանքը:

Այս ուրախ առիթով Իրանահայ Միութեան կը շնորհենք սոյն

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ

ի գնահատութիւն անոր բեղուն գործունէութեան:

Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Իրանահայ Միութեան բոլոր անդամներուն անխտիր պարգեւէ քաջառողջ կեանք եւ Իր շնորհները առատացնէ անոնց վրայ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մեզ, Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 4 Յունիսի 1999
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 166